

ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «Համակարգչային գրագիտություն»

ԽՄԲԱԿԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Սովորեցնել համակարգչային գրագիտություն:

ԽՄԲԱԿԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

Շաբաթական ժամաքանակ՝ 2, ընդհանուր ժամաքանակ՝ 68:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս դասընթացն ուսումնասիրելուց հետո աշակերտը պետք է՝

1. Իմանա ինչ է համակարգչային ցանցը, ճիշտ օգտվի համացանցից:
2. Իմանա հեռավար ուսուցման տեխնոլոգիան, տեղեկատվության անվտանգության խնդիրները, համակարգչում կարողանա հավաքել և խմբագրել հայատառ տեքստ, տիրապետի համակարգչային բառերին, օգտագործի կիրառական ծրագրերի փաթեթներ:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Գիտի ինչ է համակարգչային ցանցը, ճիշտ է օգտվում համացանցից: ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Աշակերտը պետք է

- իմանա համակարգչային ցանցի ստեղծման պատմությունը
- իմանա համակարգչային ցանցը, կառուցվածքը, տեսակները
- կարողանա համակարգիչը միացնել ցանցին
- ներկայացնի կայքերի տեսակները
- աշխատի էլեկտրոնային փոստով
- կարողանա աշխատել լրատվական կայքերի հետ
- կարողանա աշխատել որոնման համակարգերի հետ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Աշակերտին կտրվի համապատասխան հարցերը պարունակող հարցաթերթիկ, որտեղ նրան կառաջադրվի պատասխանել հետևյալ հարցերին.

- ա. Ինչի՞ համար է նախատեսված համացանցը
- բ. Համակարգչային ցանցի ստեղծման պատմությունը
- գ. Համակարգչային ցանցերի հիմնական նպատակը
- դ. Կայքերի դասակարգումը
- ե. Էլեկտրոնային փոստի կառուցվածքը
- զ. Ի՞նչ է նշանակում աշխատել լրատվական կայքերի հետ
- է. Ի՞նչ հնարավորություններ են տալիս որոնման համակարգերը:

Գործնական առաջադրանքով աշակերտներին կհանձնարարվի համակարգիչը միացնել ցանցին, աշխատել էլեկտրոնային փոստով, լրատվական կայքերի և որոնման համակարգերի հետ:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե աշակերտը ճիշտ է պատասխանել վերը նշված հարցերին և կատարել գործնական առաջադրանքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական գիտելիքների մատուցման, գործնական պարապմունքների միջոցով, ըստ թեմատիկ հաջորդականության: Ուսուցման ընթացքում օգտագործվում է համակարգիչ, դասագիրք:

Հ/Հ	ԹԵՄԱ	ընդհ.	տես.	գործ.
1.1	Համացանցի ստեղծման պատմությունը	2	1	1
1.2	Համակարգչային ցանցեր	2	1	1
1.3	Համակարգչային գրագիտություն	2	1	1
1.4	Համացանց և համաշխարհային սարդոստայն	2	1	1
1.5	Ինչպե՞ս միանալ համացանցին	2	1	1

1.6	Անհրաժեշտ ծրագրային ապահովում	2	1	1
1.7	Հիպերհղումներ և հիպերտեքստեր	2	1	1
1.8	Կայքեր	2	1	1
1.9	Վեբ էջ	2	1	1
1.10	Էլեկտրոնային փոստ	2	1	1
1.11	Թոստարկդ	2	1	1
1.12	Նորությունների խմբեր	2	1	1
1.13	Որոնման համակարգեր	2	1	1
1.14	Կայքերի շտեմարաններ	2	1	1
1.15	Բլոգներ	2	1	1
1.16	Միկրոբլոգներ	2	1	1
1.17	Ֆորումներ	2	1	1
1.18	Մեր դպրոցը համացանցում	2	1	1
1.19	Որոնում Google -ի միջոցով	2	1	1
1.20	Գրաֆիկական ֆայլերի պահպանման ձևաչափեր	2	1	1
1.21	Մոդելավորում	2	1	1
1.22	Տարալեզու փաստաթղթերի ստեղծում	2	1	1
1.23	Ինֆորմացիայի կոդավորումը համակարգում	2	1	1
1.24	Տվյալների հենքեր	2	1	1

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Գիտի հեռավար ուսուցման տեխնոլոգիան, տեղեկատվության անվտանգության խնդիրները, համակարգչում կարողանում է հավաքել և խմբագրել հայատառ տեքստ, տիրապետում է համակարգչային բառերին, օգտագործում է կիրառական ծրագրերի փաթեթներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Աշակերտը պետք է

- իմանա հեռավար ուսուցման տեխնոլոգիան
- իմանա տեղեկատվության անվտանգության խնդիրները
- կարողանա համակարգչում հավաքել և խմբագրել հայատառ տեքստ
- տիրապետի համակարգչային բառերին
- օգտագործի կիրառական ծրագրերի փաթեթներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Աշակերտին կտրվի համապատասխան հարցերը պարունակող հարցաթերթիկ, որտեղ նրան կառաջադրվի պատասխանել հետևյալ հարցերին.

- ա. Հեռավար ուսուցման տեխնոլոգիան
- բ. Տեղեկատվության անվտանգության խնդիրները
- գ. Ներկայացնել համակարգչային բառեր:

Գործնական առաջադրանքով աշակերտներին կհանձնարարվի համակարգչում հավաքել և խմբագրել հայերեն տեքստ, օգտագործել տարբեր կիրառական գրաձրեր:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե աշակերտը ճիշտ է պատասխանել վերը նշված հարցերին և կատարել գործնական առաջադրանքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական գիտելիքների մատուցման, գործնական պարապմունքների միջոցով, ըստ թեմատիկ հաջորդականության: Ուսուցման ընթացքում օգտագործվում է համակարգիչ, սկավառակներ:

Հ/Հ	ԹԵՄԱ	ընդհ.	տես.	գործ.
2.1	Հեռավար ուսուցում	2	1	1
2.2	Անվտանգության խնդիրները	2	1	1
2.3	Հայերենի գործիքներ	2	1	1
2.4	Համակարգչային համառոտ բառարան	2	1	1
2.5	Excel ծրագիր, էլեկրոնային աղյուսակ	2	1	1

2.6	Microsoft excel-ում հաշվարկների իրագործում	2	1	1
2.7	CorelDrow վեկտորային գրաֆիկական խմբագրիչ	2	1	1
2.8	Ծանոթություն CorelDrow x5 գրաֆիկական խմբագրիչի պատուհանի հետ	2	1	1
2.9	Նկարչության հիմնական գործիքներ	2	1	1
2.10	Մոդելների տաեսակները	2	1	1